ունին հանգիստ ի տուէ եւ ի գիշերի՝ որք եր-
կիր պագանեն գազանին եւ պատկերի նորա,

7 ԵԲ յայ | էհաս | նր | ջուրց | 8 հշին | նր (Երկոտ.) | բաբելոնի | ի գինոյ բարկութն | ամ ազգ | 9 հշին | նց | նր | ի վերա (Երկոտ.) | 10 ի գինոյ | ԵԲ բարկութենէն (Բ դակ. յօդդ ն) . . . ի բարկութենէ | ԵԲ այ | նր | ծծըմպով | հրեշտակաց | 11 յօիտենից | ի ուէ | ՅԵ [illegible] գազանին եւ [illegible]
[illegible]

եւ որ առնու դրոշմ զանուան նորա։ [12] Աստ
է համբերութիւն սրբոցն՝ որք պահեն զպա-
տուիրանս Աստուծոյ եւ զհաւատսն Յիսուսի։
[13] Եւ լուայ ձայն յերկնից՝ զի ասէր. գրեա.
երանի մեռելոցն՝ որ ի Տէր մեռանին յայսմ-
հետէ. այո, ասէ Հոգին, զի հանգիցեն յաշ-
խատութեանց իւրեանց. քանզի գործք նոցա
ընդ նմա հետեւին։

[14] Եւ տեսի՝ եւ ահաւասիկ ամպ սպիտակ,
եւ ի վերայ ամպոյն զի նստէր նման որդւոյ
մարդոյ, ունելով ի գլուխն 'իւր պսակ ոսկի.
եւ ի ձեռին իւրում գերանդի սուր յոյժ։ [15] Եւ
այլ հրեշտակ ելանէր ի յերկնից, աղաղակելով
մեծաւ բարբառով որ նստէրն ի վերայ ամպոյն.
առաքեա զգերանդիդ քո եւ հնձեա, զի եհաս

պագանեն Ի– պատկերի. ըստ Նմին օրինակի Ի– է Բ՝ Բ–– գազանին, առանց եւ է, Ի–– է է լ––– | Նր (Ե––) | դրոշմն | 12 եւ (ջեռ.՝ է) | ԵԲ համբերութի | որ | զպատուիրանս | ԵԲ այ | զհաւատս | ԵԲ յի | 13 Ե լուա. Բ լւա | որ ասէր | որք (ջեռ.՝ որ) | ԵԲ ի տր | այոյ | Ե յաշխատութեան, ––– է Ն––– Ն ––– յ––– է՝ ց. Բ յաշխատութն | իւ-րանց | նց | 14 ամբ | ի վերա ամբոյն | որդի մար-դւոյ | ի գլուխ | ի ձեռինն | գերանտի | չԵ յոյժ յ––– է՝ ––– ––– է Ն––– ––– սուր. Բ ––– յոյժ է ––– ––– | 15 հշկ | ԵԲ ––– ––՝ ի յերկնի | ի վերա ամբոյն. առաքեայ զգերանդիտ | հնձեայ | էհաս |

ժամանակ հնձելոյ, քանզի չորացան հունձք
երկրիս։ 16 Եւ եարկ զգերանդին իւր որ նստէրն
ի վերայ ամպոյն ի վերայ երկրի, եւ հնձե-
ցաւ երկիր։ 17 Եւ այլ հրշտակ ել ի տաճարէն
Աստուծոյ որ յերկինս է, ունելով եւ նա գե-
րանդի սուր։ 18 Եւ այլ հրշտակ ել ի սեղանոյն,
որ ունէր իշխանութիւն ի վերայ հրոյ սեղա-
նոյն, եւ ձայնեաց մեծաւ բարբառով այն որ
ունէր զգերանդին սուր՝ ասելով. առաքեա զգե-
րանդիդ քո սուր եւ կթեա զողկոյզ երկրի,
զի հասեալ է խաղող նորա։ 19 Եւ արկ հրեշ-
տակն զգերանդի իւր յերկիր, եւ կթեաց զայ-
գի երկրիս եւ արկ ի հնծան մեծ բարկու-
թեանն Աստուծոյ։ 20 Եւ կոխեցաւ հնծանն ար-
տաքոյ քաղաքին, եւ ել արիւնն ի հնծանէն
մինչեւ ի սանձս ձիոցն, իբրեւ ասպարիզաւք
հազար եւ վեցհարիւր։

---

16 Ե եարկ, Բ ե — | Ե զգերանդ, որ է վերոյ յետին փոսէր՝ մանր բոլոր գրով յաւելեալ է՝ ին. Բ զգերանդին | նստէր | ի վերա, այսպէս ունի Բ չերկուէնք, Ե միայն չերկուքեք | ամբոյն | 17 հշկ | ԵԲ այ | գերանոի | 18 հշկ | ԵԲ ի (դակ. Բ) սեղանեոյն | իշխանութի | ԵԲ ի վերա (Բ յաւելեալ է վերոյ տողին) | կթեայ | նր | 19 հշկն զգերանոի | ած (Ղեկ.՝ արկ) ի հնձան | բարկութեն | ԵԲ այ | 20 հնձանն | արիւն ի հնձանէն | ռ. եւ չճ |

ԳԼ. ԺԵ.

¹ Եւ տեսի այլ նշան յերկինս՝ մեծ եւ
սքանչելի. հրշտակս եւթն՝ ունելով արարած
զհարուածս, որ նշանակէին եւթն չարագոյնս
քան զամենայն չար. զի այնոքիւք կատարեցաւ
ցասումն Աստուծոյ։ ² Եւ տեսի իբրեւ ծով
ապակեղէն՝ խառնեալ հրով, եւ զյաղթող գա-
զանին եւ պատկերի նորա եւ թուոց անուան
նորա՝ զի կային ի վերայ ապակեղէն ծովուն,
ունել զքնարս Աստուծոյ. ³ Եւ երգէին զերգս
Մովսիսի՝ ծառային Աստուծոյ, եւ զերգս գա-
ռինն՝ ասելով. մեծ եւ սքանչելի են գործք քո,
Տէր Աստուած ամենակալդ. արդար, ճշմարիտ
են գործք քո, թագաւոր ազգաց։ ⁴ Ո՞վ ոչ եր-
կիցէ եւ փառաւորեսցէ զանուն քո. զի մի-
այն սուրբ ես, զի ամենայն ազգք եկեսցեն եւ

Գլ. ԺԵ. — 1 հչ̃իս Է̃ | զհարուածս. թերթս այս խանգարեալ է, ըստ Գ. է ստորեւ ջնջեալ. | Ե Նշանակերին, Բ—էրին | զէ̃ (ձեռ. եւթն Երկրորդէ) | զա̃մ | այնոքիւկ | 2 զծով | զպատկերի | Նր̃ (Երկրոր.) | ըսթուոց անուան | ի վերա | ԵԲ ա̃յ | 3 Ե երգերին, Բ—էրին | մովսէսի ծառաին | ԵԲ ա̃յ | յէ են ստորին յաւելեալ է է վերոյ տողին. Բ ունի ջնջած է կարծին | գործ քո ա̃ր ա̃ծ (չորրին ջերկորեան բառը Ե ունի համառօտէիր) | ամենակալ | են Երկր. ջնջեալ | 4 ո̃ր | ա̃մ ազգ երկրի |

երկիր պագցեն առաջի քո, զի արդարութիւնք
քո յայտնեցան։
5 Եւ յետ այսորիկ տեսի՝ եւ ահաւասիկ
տաճարն տաղաւարին վկայութեան յերկինս. 6 Եւ
ելին ի տաճարէն եւթն հրշտակք՝ որք ունէին
զեւթն հարուածս, զգեցեալ կտաւս սուրբս
եւ սպիտակս, եւ պնդեալ ոսկի գաւտւով
զլանջս իւրեանց։ 7 Եւ մի ոմն ի չորից կենդա-
նեացն ետ եւթն հրշտակացն եւթն բաժակս
ոսկիս՝ լցեալ բարկութեամբ Աստուծոյ կենդա-
նւոյ յաւիտեանս յաւիտենից։ 8 Եւ լցաւ տա-
ճարն Աստուծոյ ծխով ի փառացն Աստուծոյ
եւ ի զաւրութենէ Նորա, եւ ոչ ոք կարէր
մտանել ի տաճարն՝ մինչեւ կատարեսցին եւթն
հարուածքն եւթն հրշտակացն։

Ե արդարութիւք, Բ—թի | 5 Նախ տաղաւարահա-րաց էջեալ, յետոյ ուղղեալ՝ տաղաւարին | ԵԲ վկայու-թէ | 6 ելին ին, սխալմամբ կրկնութեան վերջաւորնկէ | Է հրշկք | Ե ունեին, Բ—էին | զէ հարւածս, ազե-ցեալ կտօս սբս | պնտեալ | ԵԲ գաւ(Բ գօ)տով | իւրանց | 7 Է հրեշտակին Է | ԵԲ բարկութբ այ | 8 ԵԲ այ, այսպէս եւ մեւսը | ի զաւրութենէ նր | Է հարւածքն Է հրեշտակացն |

ԳԼ. ԺԶ.

1 Եւ լուայ ի մեծ բարբառոյ յերկնից՝
ասելով եւթն հրշտակացն. երթա՛յք եւ հե-
ղէ՛ք զեւթն բաժակ ցասմանդ Աստուծոյ։ 2 Եւ
գնաց առաջինն եւ եհեղ զբաժակն իւր յեր-
կիր. եւ եղեն վէրք մեծամեծք եւ չարաչարք
ի վերայ մարդկան, որ ունէին զդրոշմ գազա-
նին, եւ երկիր պագին պատկերի նորա։
3 Եւ երկրորդն եհեղ զբաժակն իւր ի ծով.
եւ եղեւ արիւն իբրեւ սպանելոց, եւ ամենայն
կենդանի մեռաւ՝ որ ի ծովուն էին։
4 Եւ երրորդն եհեղ ի գետս եւ յաղ-
բեւրս ջրոց. եւ եղեւ արիւն։ 5 Եւ լուայ ի
հրշտակէն ջրոց՝ զի ասէր. արդար ես, էն՝ էդ՝
սուրբդ, զի զայս դատեցար, 6 զի զարիւն սրբոց
եւ մարգարէից հեղին, եւ ետուր դոցա ըմ-

Գլ. ԺԶ.—1 Ե լուա. Բ լւա | երկնից | Է հրեշ-տակացն | զէ̃ | ԵԲ ա̃յ | 2 էհեղ | զբաժակ | վերք | չարաչար ի վերա | Ե ունեին, Բ—էին | զդրոշմն | երկիրպագանէին | 3 էհեղ | ա̃մ | Ե եին, Բ էին | 4 էհեղ | աղբեր | 5 Ե լուա. Բ լւա | ԵԲ ի հր(բե)շ-տակին, ունէրեւ երևէ Հրէդոյ | որ ասէր | զայդ դա-տեցար | 6 սրբոցն | մարգարէիցն | ԵԲ ճիկ. ե-տուր դոցա ունէին՝ եւ արդուոց(Ն Բ), ունէրկէայ ան-մատուցութեամբ ընթերցողաց խառնակեալ ճշմարտութեան, զոր

պել արիւն. արժանի են։ 7 Եւ լուայ ի սե-
ղանոյն՝ զի ասէր. այո՛, Տէր Աստուած ամենա-
կալդ, ճշմարիտ եւ արդար են դատաստանք քո։
8 Եւ չորրորդն հեղոյր զբաժակն իւր ի
վերայ արեգականն, եւ տուաւ նմա տապա-
ցուցանել զմարդիկ հրով. 9 Եւ տապացան մար-
դիկ զտապումն, եւ հայհոյեցին զանուն Աս-
տուծոյ՝ որ ունէր իշխանութիւն ի վերայ հա-
րուածոցս այսոցիկ, եւ ո՛չ զղջացան՝ տալ նմա
փառս։
10 Եւ հինգերորդն եհեղ զբաժակն իւր ի
վերայ աթոռոյ գազանին. եւ եղեւ թագաւո-
րութիւն նորա խաւարեալ, եւ ծամէին զլե-
զուս իւրեանց ի սաստիկ ցաւոյն, 11 եւ հայ-
հոյէին զԱստուած երկնից ի ցաւոց իւրեանց,
եւ ի գործոց իւրեանց ո՛չ զղջացան։
12 Եւ վեցերորդ հրեշտակն եհեղ զբաժակն
իւր ի վերայ գետոյն մեծ Եփրատայ. եւ չո-
րացաւ ջուրն նորա, զի պատրաստեսցէ ճա-

[illegible] [illegible] [illegible] ըստ յունարէն բնագրին |
7 Ե լուա. Բ լւայ | որ (յէխ. զի) | այո | ԵԲ տ̃ր
ա̃ծ | 8 ի վերա | տւաւ | զմարդիք | 9 մարդիք |
Ե հայհոեցին, Բ—հոյ— | զանունն | ԵԲ ա̃յ | ԵԲ իշ-
խանութ̃ի | ի վերա հարուածոցս | 10 ե̃երորդն |
ԵԲ ի վերա | թագաւորութ̃ի ն̃ր | իւրանց | ցօոյն |
11 Ե հայհոէին, Բ—հոյ— | ԵԲ զա̃ծ | ի ցօոց | իւ-
րանց (Երկ․․) | 12 վեցերրորդ հշ̃ն էհեղ | ԵԲ ի
վերա | գետոյն եփրադայ մեծ | ջուր ն̃ի |

նապարհ Թագաւորին յարեւելից կողմանէ։ [13] Եւ
տեսի ի բերանոյ գազանին եւ ի բերանոյ վի-
շապին եւ ի բերանոյ սուտ մարգարէին ոգիս
երիս պիղծս՝ իբրեւ զգորտս. [14] քանզի են շունչք
դիւաց՝ որ առնեն նշանս, եւ ելանեն ի վերայ
Թագաւորաց երկրիս ամենայնի, եւ ժողովեն
զնոսա առ ի պատերազմ մեծին Աստուծոյ ամե-
նակալի։ [15] Ահաւասիկ գամ իբրեւ զգող. երա-
նի՜ որ արթուն է, եւ որ պահէ զհանդերձս
իւր, զի մի՜ մերկ գնասցէ, եւ տեսցեն զան-
ձեւութիւն նորա։ [16] Եւ ժողովեաց զնոսա ի տե-
ղին՝ անուանեալ եբրայեցերէն Առմագեդովն։
[17] Եւ եւթներորդ հրեշտակն եհեղ զբա-
ժակն իւր ի վերայ աւդոյ. եւ ել ձայն մեծ
յերկնից յաթոռոյն։ [18] Եւ եղեն փայլատակ-
մունք եւ որոտմունք, եւ շարժումն եղեւ
մեծ, որպէս չէ՛ք եղեալ ի սկզբանէ՝ յորմէ հետէ
եղեն մարդիկ ի վերայ երկրի՝ այսպիսի շար-
ժումն մեծ։ [19] Եղեւ քաղաքն մեծ յերիս բա-
ժինս, եւ քաղաքքն ազգաց անկան. եւ մեծն
Բաբելոն յիշեցաւ առաջի Աստուծոյ, տալ նմա

13 ոչ գորտս | 14 ի վերա | ամի | ժողովին զնս առ ի պատերազմն | ԵԲ ոյ | ամենակալ | 15 զհան-դերձս | գնասցէ | ԵԲ զանձեւութի | նի | 16 զնս | անուանեալ | սխալմամբ գրչաց ունին ԵԲ առնագե-(Բ է)դոմն. հմմտ. է ատորէս գծանօքն. յանուանց յոյզ | 17 էերորդ հշին էհեղ | ի վերա | 18 շարժմունք | ոչ | մարդիք ի վերա | 19 ԵԲ ոյ |

զբաժակն գինւոյ ցասման նորա։ 20 *Եւ ամենայն*
կղզիք փախեան, եւ լերինք ոչ գտան։ 21 *Եւ*
կարկուտ մեծ իբրեւ զտաղանդ իջանէր յեր-
կնից ի վերայ մարդկան. եւ հայհոյեցին մար-
դիկ զԱստուած յերկինս՝ վասն կարկտին, զի
մեծ էին հարուածք նորա։

ԳԼ. ԺԷ.

1 *Եւ եկն մի ոմն յեւթն հրեշտակացն՝ որ*
ունէին զեւթն բաժակսն, եւ խաւսեցաւ ընդ
իս՝ ասելով. եկ, եւ ցուցից քեզ զդատաս-
տանն մեծ պոռնկին՝ որ նստի ի վերայ ջրոց
բազմաց, 2 *ընդ որում պոռնկեցան թագաւորք*
երկրի, եւ արբեցան բնակիչք երկրի ի գինւոյ
պոռնկութեան նորա։ 3 *Եւ տարապարտ հոգւով։*
Եւ տեսի կին՝ զի նստէր ի վերայ կարմիր գա-

գինոյ | նա̃ | 20 ա̃մ | 21 զտաղանդ, այսպէս նաեւ ինչ ուղղէ օրինակէս Ե՝ վտաղանդ, Բ՝ վտաղանտ. — տ. է տպուած գծանօք. | ի վերա | Ե հայհոեցին, Բ —հոյ— | մարդիք | ԵԲ զա̃ծ | Ե եին. Բ էին | հարուածք նա̃ |

ԳԼ. ԺԷ.—1 է̃ հրեշտակացն | որ ունէր զէ̃ բաժակն | խօսեցաւ | պոռընկին | ի վերա | 2 պոռընկեցան | ի գինոյ պոռընկութեան նա̃ | 3 յաղագս նորանոյ ընթերցուածոյս տարապարտ, ըստ ԵԲ ձեռագրաց գրեն, տ. է տպուած գծանօք. յայս բառ | ի վե-

զանի, եւ լի էր անուամբք հայհոյութեան, ու-
նէր գլուխս եւթն եւ եղջեւրս տասն։ 4 Եւ կինն
էր զգեցեալ ծիրանի եւ կարմիր, եւ զարդա-
րեալ ոսկւով եւ մարգարտով եւ պատուա-
կան ականմբք, ունելով բաժակ ոսկի ի ձեռին
իւրում, եւ լի էր պղծութեամբ եւ անմա-
քուր պոռնկութեամբ, 5 եւ ի վերայ ճակա-
տու նորա գրեալ անուն. խորհուրդ, մեծ Բա-
բիլոնն, մայրն պղծութեանց եւ պոռնկաց եր-
կրիս։ 6 Եւ տեսի զկինն արբեալ արեամբ սրբոց
եւ արեամբ վկայիցն Յիսուսի. եւ զարմացայ՝
տեսեալ զնա՝ զարմացումն մեծ։ 7 Եւ ասէ ցիս
հրեշտակն. ընդէ՞ր զարմացար. ես ասացից քեզ
զխորհուրդ կնոջս եւ գազանիս՝ որ բարձցէ
զսա, որ ունի զեւթն գլուխս եւ զտասն եղ-
ջեւրս։ 8 Զգազանդ զոր տեսեր՝ որ էր, եւ չէ,
եւ հանդերձեալ է ելանել յանդնդոց՝ եւ ի
կորուստ երթալ. եւ զարմասցին ամենեքեան՝
որ բնակեալ են ի վերայ երկրի, որոց ոչ է

րա | անուամբք հայհոյութե̄ | եւ գլուխս է̄ | եղ-
ջերս Ժ̄. | 4 ըզգեցեալ | պատուական | ԵԲ պղծու-
թք ... պոռ(բը)նկութք | 5 ԵԲ ի վերա | նր |
բաբելոնն | մայր պղծութե̄ց | 6 սրբոցն | վկայից |
ԵԲ յի̄ | ԵԲ զարմացա | 7 հշ̄կն | կնոջս | զէ̄ | զժ̄
եղջիւրս | 8 զգազանտ. — այլայլեալ է ձեռօք հա-
րաձեւ, զորմէ տ. է տարբեր ընթերցումն. յայս տեղի | յան-
տընդոց | ամէնեքեան | ի վերա |

գրեալ անունն ի գիրս կենաց՝ ի սկզբանէ աշ-
խարհիս, տեսանելով զգազանն՝ զի էր, եւ չէ,
եւ առընթեր լիցի: 9 Աստ միտք՝ որ ունի զի-
մաստութիւն: Եւթն գլուխքն՝ եւթն լերինք
են, ուր կինն նստի ի վերայ նոցա, 10 եւ թա-
գաւորք եւթն են. հինգն անկան, եւ միւսն
չեւ եւս է եկեալ, եւ յորժամ եկեսցէ՝ պարտ
է նմա սակաւ մի մնալ: 11 Եւ գազանն՝ որ էր
եւ ոչ եւս է, եւ նա ութերորդ է, եւ է
յեւթանց անտի. եւ ի կորուստ երթայ: 12 Եւ
զտասն եղջիւրսն զոր տեսեր՝ տասն թագաւորք
են, որոց զթագաւորութիւնն չեւ եւս են ա-
ռեալ. իշխանութիւն իբրեւ զթագաւորս ի մի
ժամ առնուն ընդ գազանին: 13 Սոքա մի միտս
ունին, եւ զզաւրութիւն իւրեանց գազանին
տան: 14 Սոքա ընդ գառինն պատերազմեսցին.
եւ գառնն յաղթեսցէ նոցա, զի տէր է տե-
րանց եւ թագաւոր է թագաւորաց, եւ որ
ընդ նմա՝ կոչեցեալ են եւ ընտրեալք եւ
հաւատայեալք: 15 Եւ ասաց ցիս. Ջուրս՝ զոր

9 ԵԲ զիմաստութի | Երկոտքն եւթն Երեւալ են Բոստ-գրոմ՝ է | ի վերա նց | 10 էն | միուսն | սակօ մի | 11 ըերրորդ | էանց (Ձեռ.՝ յեւթանց) | Ե երթա, Բ–յ | 12 զժ եղջիւրսն | ժ | զթագաւորութին | ԵԲ իշխանութի | 13 ԵԲ զ(դոկ. Բ)զաւրութի | իւրանց | 14 պատերազմեսցեն | նց | որ (Նախ Ե) որանց | Թգր | Թգրաց |

տեսեր, ուր նստի պոռնիկն, ժողովուրդն եւ
բազմութիւնք են, եւ ազգք եւ լեզուք։ [16] Եւ
տասն եղջերսն զոր տեսեր՝ դատեսցեն զբոզն,
եւ անապատ եւ մերկ արասցեն զնա, եւ
զմարմինս նորա կերիցեն՝ եւ զնա այրեսցեն
հրով. [17] քանզի Աստուած ետ ի սիրտս նոցա՝
առնել զկամս նորա, եւ առնել մի կամս, եւ
տալ զԹագաւորութիւնս նոցա գազանին՝ մին-
չեւ կատարեսցի բանն Աստուծոյ։ [18] Եւ կինն
զոր տեսեր՝ է քաղաք մեծ, որ ունի Թագա-
ւորութիւն ի վերայ երկրի։

ԳԼ. ԺԸ.

[1] Յետ այսորիկ տեսի հրեշտակ իջեալ ի
յերկնից, ունելով իշխանութիւն մեծ, եւ եր-
կիր լուսաւորեցաւ ի փառաց նորա։ [2] Եւ աղա-
ղակեաց ձայնիւ հզաւր՝ ասելով. անկաւ, ան-
կաւ Բաբիլոն մեծ, եւ եղեւ բնակութիւն
դիւաց, եւ արգելան ամենայն այսոյ պղծոյ

15 բազմութ̃իք | ազգ | 16 ժ̃ եղջիւրսն | տերն
(ծնկ.՝ տեսեր) | նր̃ | 17 ԵԲ ա̃ծ | նց̃ (եւրկտ.) |
նր̃ | ԵԲ զԹագաւորութ̃իս | ԵԲ ա̃յ | 18 Ե Թա-
գաւորութ̃ի, Բ զ — Թ̃ին | ի վերա |
ԳԼ. ԺԸ.— 1 հշ̃լ | ի առաջին պակասէ | իշխանու-
Թ̃ի | նր̃ | 2 բաբելոն | Ե բնակութ̃ի, Բ—Թ̃ք |
ծնկ. արգելան ԵԲ ձեռքինով գրեն՝ արգելաւ, զոր պատ-

եւ ատեցելոյ, եւ պահապան ամենայն ոգւոյ
անսրբոյ եւ ատեցելոյ. [3] զի ի բարկութենէ
գինւոյ պոռնկութեան նորա անկան ամենայն
ազգք, եւ թագաւորք երկրի ընդ նմա պոռն-
կեցան, եւ վաճառականք երկրիս ընդ նմա
պոռնկեցան, ի զաւրութենէ փափկութեանց
նորա մեծացան։ [4] Եւ լուայ ձայն յերկնից՝
ասելով. ելէ՛ք ի դմանէ, ժողովուրդք իմ, զի
մի հաղորդիցիք ի մեղաց դորա, եւ ի հա-
րուածոց դորա զի մի առցէք. [5] զի կցեցաւ
դորա մինչեւ յերկինս, եւ յիշեաց Աստուած
զանիրաւութիւնս նորա։ [6] Հատուցէ՛ք դմա որ-
պէս հատոյցն ձեզ, եւ կրկնեցէ՛ք դմա երկ-
պատիկ ըստ գործոց իւրոց. բաժակաւն որով
խառնեաց՝ խառնեցէ՛ք դմա կրկին. [7] որչափ
փառաւորեաց զինքն եւ փափկեաց, այնչափ
հատուցէ՛ք դմա տանջանս եւ սուգ. զի ի

[illegible] պահապան Գ. Է [illegible] | ամ̃, [illegible] | 3 բարկութենէ, [illegible] | ԵԲ պոռ(ԲԸ)նկութե̃ | նր̃ ([illegible]) | անկաւ ամ̃ ազգ | պոռընկեցան | պոռընկեցաւ, ի զաւրութենէ փափկութե̃ց | 4 Ե լուա. Բ լւա | ելէ՛ք | ժողովուրդ | դորայ | ի հարուածոց | 5 [illegible] կցեցաւ [illegible] ԵԲ, [illegible] Գ. Է [illegible] | ԵԲ ած̃ | Ե զանիրաւութի̃ս, Բ-թի̃ | նր̃ | 6 որպ̃ս | խառնէցէք |

սրտի իւրում ասաց եթէ՝ Նստիմ դշխոյ յաւ-
իտեան, եւ այրի ոչ եւս եմ, եւ սուգ ոչ
տեսից։ 8 Վասն այսորիկ ի միում աւուր եկես-
ցեն տանջանք նորա՝ մահ եւ սուգ եւ սով,
եւ հուր այրեսցէ զնա. զի հզաւր է Տէր
Աստուած՝ որ դատեսցուն զնա։

9 Եւ լայցեն եւ կոծեսցեն Թագաւորք եր-
կրիս ի վերայ նորա, որք ընդ նմա պոռնկե-
ցան եւ վրիրակ խաղացին, յորժամ տեսցեն
զծուխ կիզման նորա, 10 ի հեռաստանէ կալով
վասն երկիւղի եւ տանջանաց նորա. վա՜յ, վա՜յ,
քաղաք մեծ, Բաբելոն, քաղաք հզաւր, զի
ի միում ժամու եկին դատաստանք քո։ 11 Եւ
վաճառականք երկրիս լայցեն եւ սգայցեն ի
վերայ նորա, զի զբեռն նոցա ոչ ոք գնէ.
12 զբեռն ոսկւոյ եւ քարի պատուականի եւ
բեհեզի եւ ծիրանւոյ եւ կերպասոյ եւ որ-
դան, եւ զամենայն փայտ Թիւինոյ եւ ամե-
նայն անաւթ փղոսկրեայ եւ ամենայն անաւթ
ի փայտէ պատուականէ եւ պղնձոյ եւ եր-
կաթոյ եւ կճոյ, 13 եւ կինամոմին եւ ամենայն

7 Թէ | 8 նր̃ | Ե Բ տ̃ր ա̃ծ | 9 Ե Բ ի վերա |
նր̃ (երկու.) | պոռընկեցան | 10 նր̃ | յառաջ քան զմիջ-
արկութիւնսն վա՜յ վա՜յ դնին ինչ յերկ. օրին. Ե Բ |
11 ի վերա նր̃ | նց̃ | 12 ոսկոյ | պատուականի |
զի̃մ | ա̃մ (երկու.) | Ե փղոսկրեա, Բ–յ | փայտէ
(առանց նախդրի) պատուականէ | պղնծոյ | 13 ա̃մ |

խունկ եւ եւղ եւ կնդրուկ եւ գինի եւ
ձէթ եւ նաշիհ եւ ցորեան, եւ արջառ եւ
ոչխար, եւ ձիոց եւ կառաց եւ մարմնոց եւ
ոգւոց մարդկան. [14] եւ ժամանակ ցանկութեան
անձին քո գնաց ի քէն, եւ ամենայն պարարտ
եւ սպիտակ կորեաւ ի քէն, եւ ո՛չ եւս
գտցես զայդ: [15] Վաճառականք այսոքիւք՝ մե-
ծացեան ի սմանէ, ի հեռաստանէ կալով վասն
երկիւղի եւ տանջանաց նորա՝ լալով եւ սուգ
առնելով, [16] եւ ասելով. վա՜յ, վա՜յ, քաղաք
մեծ, որ արկեալ էր զկւրեաւ բեհեզ, որդան,
ոսկւով եւ քարիւ պատուականաւ եւ մարգար-
տով, զի ի միում աւուր աւերեցաւ այսչափ
մեծութիւն: [17] Եւ ամենայն աւար, եւ ամե-
նայն որք ի տեղիս նաւեն, եւ նաւազք եւ
որ միանգամ գործաւք գործեն, ի հեռաս-
տանէ կայցեն՝ [18] աղաղակեսցեն՝ տեսանելով
զծուխ կիզման նորա, ասելով. ո՞ նման է քա-

իւղ | կնտրուկ | ձեթ | կառոց | 14 ԵԲ ցանկու-թ̄ե | ա̄մ | ա̄պ | 15 [illegible] Հմմտ. [illegible] | նէ̄ | սուք | 16 զիւրաւ | որդեան | Ե պատուականեաւ. Բ պա-տուականիւ | Ե մարգարտւով, Բ—տիւ | աւիրեցաւ | ԵԲ մեծութ̄ի | 17 ա̄մ, [illegible] | ԵԲ աւ-ար, [illegible] | միան-կամ | ԵԲ գործաւք, [illegible] գործեաւք. [illegible] | 18 նմանէ |

ղաքիս մեծի։ 19 Եւ արկին հող ի վերայ գլխոց
իւրեանց, աղաղակեցին ձայնիւ մեծաւ՝ լա-
լով եւ ողալով եւ ասելով. վա՛յ, վա՛յ, քա-
ղաք մեծ, որ այժմ մեծացաք ամենեքեան՝
որք ունէաք զնաւս ի ծովու՝ ի պատուակա-
նութեան նորա, զի ի միում ժամու աւերե-
ցաւ։ 20 Ուրախ լե՛ր ի վերայ նորա, երկինք
եւ սուրբ առաքեալք եւ մարգարէք, զի դա-
տեցաւ Աստուած զդատաստան ձեր ի նմանէ։
21 Եւ առ հրեշտակ մի հզաւր՝ քար իբրեւ
զերկան մեծ, եւ ընկէց ի ծով՝ ասելով. այա-
պէս յարձակմամբ անկցի Բաբելոնն մեծ քա-
ղաք, եւ ոչ եւս գտցի անդր։ 22 Եւ ձայն
քնարերգաց եւ երաժշտականաց եւ փողարաց
եւ փողոց՝ ո՛չ եւս լուիցին ի քեզ, 23 եւ լոյս
ճրագի ո՛չ եւս երեւեսցի ի քեզ, եւ ձայն
փեսայի ո՛չ եւս լուիցի ի քեզ. զի վաճառա-
կանք քո էին մեծամեծք երկրի, զի կախար-
դութեամբ քով մոլորեցան ամենայն ազինք.

---

19 ԵԲ ի վերա | իւրանց | ոգով (ճիշ.՝ ոգալով) | այժմն | ամէնեքեան | ԵԲ ի պատուա(Բ—ւա)կանու-թե | Նր. — Իմաստ բանից տարէն յայսմ համարէ խան-գարեալ է. ըստ Գ. է ծանօթ. | 20 ի վերա Նր | սբ | ԵԲ ած | 21 հշկ | ընկեց | այապս | 22 ճիշ. լուի-ցին (լաւ եւս՝ լուիցի)՝ Նաեւ Նէ ըն Գրչի Հեղաշաւ-անէին Ե լուիցեն, Բ ըւիցեն | 23 Ե ե(Բ է)ին | ԵԲ կախարդութբ | ամ |

24 եւ ի նմա ամենայն արիւն սրբոց եւ մար-
գարէից գտաւ, եւ ամենայն խողխողելոց ի
վերայ երկրի։

ԳԼ. ԺԹ.

1 Եւ յետ այսորիկ լուայ ձայն բազմու-
թեան յերկնից մեծ՝ ասելով. ալէլուիա,
փրկութիւն եւ փառք Աստուծոյ մերոյ. 2 զի
ճշմարիտ եւ արդար են դատաստանք նորա,
զի դատեցաւ զպոռնիկն մեծ որ ապականեաց
զերկիր ի պոռնկութեան իւրում, եւ խնդրեաց
զվրէժ արեան ծառայից իւրոց ի ձեռաց նորա։
3 Եւ կրկին ասացին. ալէլուիա, եւ ծուխ նորա
ելանէր յաւիտեանս յաւիտենից։ 4 Եւ անկան
քսան եւ չորք ծերքն՝ եւ չորք կենդանիքն,
եւ երկիր պագին Աստուծոյ՝ որ նստի ի վերայ
աթոռոյն, ասելով. 5 աւրհնեցէք, աւրհնեցէք
զԱստուած ամենայն ծառայք նորա, եւ դք

---

24 ամ (երկուքին) | ի վերա |

ԳԼ. ԺԹ. — 1 Ե լուա. Բ լւա | բազմութե | ալէ-
լուիայ | փրկութի | ԵԲ այ | 2 նի (երկուք.) | ԵԲ ի
պոռ(Բ ը)նկութե | խընդրեաց | 3 էլւկ. ծուխ նորա
ԵԲ ունին՝ ծուխն որ, որ Ընթեռնու ըստ յետին ձեռագրաց է,
ԵԲԵ ունի մայլուներով ինչ ընթերցուած, ըստ որ. է ձա-
նօթ. | 4 իդ ծերքն | ԵԲ այ | ի վերա | 5 աւհ-
ցէք աւհցէք | ԵԲ զած | ամ |

երկնչիք ի նմանէ, եւ փոքունք եւ մեծա-
մեծք։ 6 Եւ լուայ ձայն իբրեւ բազմութեան
մեծի եւ իբրեւ զձայն ջրոց բազմաց, իբրեւ
զձայն հզաւր որոտմանց. ալէլուիա, եւ Թա-
գաւորեաց ի մեզ Տէր Աստուած ամենակալ։
7 Եւ խնդամք եւ ցնծամք, եւ տացուք փառս
նմա, վասն զի կրկին ի հարսանիս իւր գա-
ռինն, եւ կինն՝ հարսն նորա պատրաստեաց
զինքն. 8 եւ տուաւ նմա՝ զի արկցէ զնովաւ
բեհեզ սպիտակ լուսափառ սուրբ. քանզի
բեհեզն արդարութիւնք սրբոցն են։ 9 Եւ ասէն
ցիս. գրեա. երանելիք են՝ որ կոչեցեալ են
յընթրիս գառինն։ Եւ ասէն ցիս. այս բանք
ճշմարիտ են Աստուծոյ։ 10 Եւ անկայ առաջի
ոտից նորա եւ երկիր պագի նմա։ Եւ ասէ.
տես, մի՛ թէ. ծառայակից քո եմ եւ եղբարց
քոց՝ որք ունին զվկայութիւնն Յիսուսի. Աս-

---

6 լուա. B լւա | բազմութ̃ե | ալէլուիայ. — պակաս Նախընթաց բառս ենչ յերկուսին օրինակը EB | EB տ̃ր ա̃ծ | 7 ցընծամք | Հարած բանէցը վասն զի կրկին մինչև գառինն, զոր մոռցան ունին EB, պաշտօնական ե. ի. ըմանօր. յայս համար | նր̃ | 8 տուաւ | սր̃ | արդարութ̃իք | 9 ըերկուէնը ասէն հրե E՝ ասեն, իսկ B ունի ըստընդ.՝ ասեն, եւ չէրեր.՝ ասէ | կոչեցեալ | E անըստըր հրեէ Հրեղակա՝ յնթ̃րիս. B յընթ̃րիս | EB ա̃յ | 10 E անկա, B –յ | նջ̃ | երկրպագի | զվկայութ̃ին | E յի̃ ա̃յ. B ա̃յ յի̃ |

տուծոյ երկրպագեա՛. քանզի հաստատութեամբն
Յիսուսի է մարգարէութիւն։
[11] Եւ տեսի զերկին բացեալ, եւ ահաւ-
ասիկ ձի սպիտակ, եւ որ հեծեալն էր ի
նմա՝ կոչի հաւատարիմ եւ ճշմարիտ, եւ ար-
դարութեամբ դատի եւ պատերազմի։ [12] Եւ
աչք Նորա իբրեւ զՋահս հրեղէնս, եւ ի
վերայ գլխոյ Նորա պսակ բազում, անուանս
ունելով գրեալս, զոր ո՛չ ոք կարէ գիտել՝
բայց միայն ինքն, [13] եւ արկեալ զինքեամբ
հանդերձ անկեալ արեամբ, որ կոչի անուն
Նորա՝ Բանն Աստուծոյ։ [14] Եւ զաւրավարք եր-
կնից եւ զաւրք երկնից երթային զհետ Նորա
ձիովք սպիտակաւք, զգեցեալ բեհեզ սպի-
տակ սուրբ։ [15] Եւ ի բերանոյ Նորա ելանէր
սուր սրեալ, զի Նովաւ հարցէ զազգսն. եւ
Նա հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկա-
թեաւ, եւ Նա կոխեսցէ զնոսա իբրեւ հնձան
գինւոյ ցասման Աստուծոյ ամենակալի։ [16] Եւ

հաստատութիւն յի (Ե նոյնպէս յի) | մարգարէութի |
11 զի երկին | կոչեալն (փխկ. հեծեալն), անմտադրու-
թեան վրիպանօք, նոյն է՝ ուղղեցուցանէ հետագայ կոչի
բառին | ԵԲ արդարութբ | 12 նր (երկոք.) | ի վե-
րա | անուանս | 13 նր | ԵԲ այ | 14 երթային |
նր | Ե ձեւք. Բ ձիաւք | ըզգեցեալ | սբ | 15 նր |
հովւեսցէ զնս գաւազանեաւ | զնս (երկր.) | հնձան |
ԵԲ այ |

էր ի վերայ զգեստոյ, եւ ի վերայ Նորա երա-
նաց իւրոց, եւ ի վերայ աչոյ բարձին՝ Թա-
գաւոր Թագաւորաց եւ տէր տերանց։
17 Եւ տեսի մի Հրեշտակ՝ որ կայր ի վերայ
արեգական, աղաղակեաց ի ձայն մեծ՝ ասե-
լով ամենայն հաւուց թռուցելոց ընդ մէջ
երկնից. եկա՛յք ժողովեցարո՛ւք ի մեծ ընթրիս
Աստուծոյ, 18 եւ կերիջիք զմարմինս Թագաւո-
րաց, եւ զմարմինս հազարապետաց, եւ զմար-
մինս հզաւրաց, եւ զմարմինս երիվարաց եւ
հեծելոց ի նոսա, եւ զմարմինս զամենայն
ազատաց եւ զծառայից, եւ զփոքրկաց եւ
զմեծամեծաց։ 19 Եւ տեսի զգազանն եւ զԹա-
գաւորս երկրիս եւ զզաւրս նոցա ժողովեալ՝
առնել պատերազմ ընդ այն որ հեծեալն էր
ի ձի՝ եւ ընդ զաւրս Նորա։ 20 Եւ ըմբռնեցաւ
գազանն, եւ ընդ նմա սուտ մարգարէն՝ որ
արար զնշանս առաջի Նորա, որով մոլորեցոյց

16 ԵԲ ի վեր(աԲ) սգեստոյ | ի վերա (ԽՐԵՇԷՆՔ) | ն̃ր | երանացիտոց (Փխկ.՝ երանաց իւրոց). աղաւաղու-
թիւն ինչ թուի լինել ի բնագրին յերկուսին օրինակս ԵԲ.
գ. է ստորև գծանօթ. | թ̃գր թ̃գց եւ տ̃ր (տ̃ր Նա
Խա Ե) տ̃րանց | 17 եւ տեսի այլ հշ̃լ ի վերա
(Ե Խա ի վերա) արեգականն կայր | մ̃մ | ի մէջ |
ԵԲ ա̃յ | 18 կերիչիք | թ̃գց | հ̃ապետաց | ն̃ջ
(Փխկ. ի նոսա) | մ̃մ | ծառայից | 19 զթ̃գրս | ն̃ջ |
պատերազ̃մն | ն̃ր |

որք առին զշնորհս գազանին՝ եւ զերկրպագուս
պատկերի նորա. կենդանւոյն ընկեցին ի լիճ
հրոյն բորբոքելոյ ծծմբով. 21 Եւ մնացեալքն սպա-
նան սրով հեծելոյն ի բերանոյ նորա. եւ ամե-
նայն թռչունք յագեցան ի մարմնոց նոցա.

ԳԼ. Ի.

1 Եւ տեսի հրեշտակ զի իջանէր յերկնից,
ունելով զբանալիս անդնդոց եւ շղթայ մեծ ի
ձեռին իւրում. 2 Եւ կալաւ զվիշապն մեծ,
զաւձն զառաջին, որ է մատնիչ եւ սատանայ,
եւ կապեաց զնա զհազար ամ՝ 3 յանդունդս,
եւ կապեաց եւ փակեաց եւ կնքեաց ի վե-
րայ նորա, զի մի եւս մոլորեցուսցէ զազգիս,
մինչեւ կատարեսցի հազար ամն. եւ յետ այ-
սորիկ պարտ է լուծանիլ ի փոքր ժամանակ.
4 Եւ տեսի աթոռս, եւ նստան ի նոսա,

---

20 նր, այսպէս եւ Վենետ | 21 ի բերանո նր. որեղէս այս խոնկորէնաւ է յերկ. օրէն. ԵԲ. հմմտ. գծանօթ. | ամ | ի մարմնոց նց |

ԳԼ. Ի. — 1 հշկ | անտընդոց | ԵԲ շղթա | ի ձեռինն | 2 սատանա | ու (տառից Նախպրէ) ամ | 3 յանտունտս. — տառաջրյ բառը էնչ դոկտոեն յերկրոբն օրէն. ԵԲ. — հմմտ. խոնարհաէոյն գծանօթ. յայս համար | ի վերա նր | ու ամ | 4 ԵԲ էէրկ. աթոռս ստ. նքն՝ յայտնապէս էրլէ սխալմամբ՝ աթոռ | ի նս |

եւ դատաստան տուաւ նոցա, եւ զանձինս
չարչարելոցն վասն անուանն Յիսուսի եւ վասն
Բանին, որք ոչ պագին երկիր գազանին եւ
պատկերի նորա, եւ ոչ առին դրոշմ ի վերայ
ճակատու եւ ձեռին իւրեանց. եւ կեցցեն
եւ թագաւորեսցեն ընդ Քրիստոսի զհազար
ամ։ 5 Եւ մնացորդք մեռելոցն ոչ եւս եկեա-
ցեն, մինչեւ կատարեսցին ի վերայ նոցա
հազար ամն։ Այս է առաջին յարութիւնն։
6 Երանելի են եւ սուրբ՝ որ ունին մասն յա-
րութեան առաջնումն. զի ի վերայ այսոցիկ
երկրորդ մահն ոչ ունի իշխանութիւն, այլ
են քահանայք Յիսուսի Քրիստոսի, եւ թա-
գաւորեսցեն ընդ նմա զհազար ամ։

7 Եւ յորժամ կատարեսցի հազար ամն՝
լուծցի սատանայ, եւ ելցէ ի բանդէն՝ ի կա-
պանաց իւրոց, 8 եւ ելցէ մոլորեցուցանել
զազգինս՝ որք են ի չորս անկիւնս երկրի, եւ

տուաւ նմ | վմ, այսպէս եւ մեզ | անուանն | ԵԲ յի |
նր | ԵԲ ի վերա | ճակատուն | ի վերա ձեռինն իւ-
րանց | ԵԲ քի | զռ ամ | 5 ոչ եւս եկեսցեն,
— սխալ ինչ կայ է տեղւոյս, ասէ որոյ փ. խմբագրա-
կոյն զծանօթ. յայս համար | կատարեսցի ի վերա նմ
ռ | յարութիւնն | 6 որք | ԵԲ յարութե | յառաջ-
նումն | ի վերա այնոցիկ | իշխանութի | քհյք |
ԵԲ յի քի | թգրեսցեն | զռ ամ | 7 ռ ամն |
սատանա | ի բանտէն | 8 ԵԲ ելցեն |

զԳոգ եւ զՄագոգ, եւ ժողովել զնոսա
առ ի պատերազմ, որոց թիւն է իբրեւ
զաւազ ծովու։ [9] Եւ ելցեն ի վերայ լայնու-
թեան երկրի, եւ պատերազմեսցին ընդ բա-
նակս սրբոցն եւ ընդ քաղաքն սիրելի. եւ
էջ հուր յԱստուծոյ յերկնից եւ եկեր զնո-
սա. [10] Եւ բանսարկուն՝ որ մոլորեցոյց զնոսա՝
ընկեցաւ ի լիճ հրոյն եւ ծծմբոյն, ուր գա-
զանն եւ սատանայ մարգարէն, եւ տանջեսցին ի տուէ եւ ի գիշերի յաւիտեանս յաւիտենից։

[11] Եւ տեսի աթոռ մեծ եւ սպիտակ եւ
որ նստէր ի վերայ նորա, յորոյ երեսաց փա-
խեաւ երկին եւ երկիր, եւ տեղի ոչ գտաւ
նոցա։ [12] Եւ տեսի զմեռեալս՝ եւ զմեծամեծս
եւ զփոքունս, որ կային առաջի աթոռոյն,
եւ գիրս բացան, եւ այլ գիրս բացան՝ որ
են կենդանութեան. եւ դատեցան մեռեալքն
ի գրելոցն ի գիրսն՝ եւ գործք նոցա։ [13] Եւ
ետ ծովն զմեռեալսն որ ի նմա էին։ [14] Եւ
մահ եւ դժոխք ընկեցան ի լիճ հրոյն. Սա է

զնս | առ ի պատերազմն | 9 լայնութե | Ե պա-
տերազմեսցեն, Բ-ցին | ԵԲ յայ | զնս | 10 զնս |
Ե ծըծմբոյն, Բ ծծմ- | ի տուէ | 11 նպ | ի վերա
նր | ի նս (ՔԽԿ.՝ նոցա) | 12 կային | ԵԲ կենդա-
նութե | եւ ի գործք նց | 13 Ե ելին. Բ էին |

մահն երկրորդ։ 15 Որ ոչ գտաւ գրեալ ի
գիրս կենդանութեան՝ ընկեցաւ ի լիճ հրոյն։

ԳԼ. ԻԱ.

1 Եւ տեսի զերկինս թափուր՝ եւ զերկիր
թափուր, եւ թափուր երկին եւ երկիր անց.
եւ ծով ոչ եւս է։ 2 Զի զքաղաքն սուրբ
Երուսաղէմ տեսի նոր՝ իջանելով յերկնից
յԱստուծոյ, պատրաստեալ իբրեւ զհարսն՝
զարդարեալ առն իւրում։ 3 Եւ լուայ ձայն
մեծ յերկնից՝ ասելով. ահաւասիկ բնակու-
թիւն Աստուծոյ ընդ մարդկան, եւ բնակեսցէ
ընդ նոսա, եւ նոքա ժողովուրդ նորա եղի-
ցին, եւ նա՝ Աստուած՝ ընդ նոսա եղիցի.
4 եւ սրբեսցէ զամենայն արտասուս յաչաց նո-
ցա, եւ մահ ոչ եւս իցէ, եւ ոչ աղաղակ,

---

15 գրեալ պակասէ | ԵԲ կենդ(Բ տ)անութե՛ |

ԳԼ. ԻԱ.—1 յաղագս բառիս թափուր, որ առ-
դիմանէ ի չէութեան երկնից յատուկին նմանոյն բառից
ընդ միմեանս, տ. Խանդարհապեայն ղծանօթ. է համարս յայս |
2 նք | Ե Ե՛մ. Բ Է՛մ | ԵԲ սխալ բաժանմամբ բառից
գրեն՝ տեսին որ, փխ.՝ տեսի նոր | ԵԲ յ՛յ |
3 Ե լուա. Բ լւա | ԵԲ բնակութի՛ ա՛յ | մարդկա |
ընդ նմ՛, այնպէս եւ միւսդ | նի | ԵԲ ա՛ծ |
4 զա՛մ | նյ՛ | մա հովեսցէ, խառնակ գրութեան,
փխ.՝ մահ ոչ եւս իցէ | եւս երկր. պակասէ |

եւ ցաւք ո՛չ եւս իցեն. առաջինքն գնացին։
5 Եւ ասաց ինձ որ նստէրն ի վերայ աթո-
ռոյն. ահաւասիկ նոր առնեմ զամենայն։ Եւ
ասէ. գրեա՛, զի այս բանք հաւատարիմ են
եւ ճշմարիտ։ 6 Եւ ասաց. եղէ ես այփն եւ
ովն, սկիզբն եւ կատարածն. եւ ծարաւելոյն
տաց յաղբիւրէ ջրոյն կենդանութեան ձրի։
7 Որ յաղթէն՝ ժառանգեսցէ զայս. եւ եղէց
նոցա Աստուած, եւ նա եղիցի իմ որդի։
8 Իսկ թերահաւատից եւ վատաբարոյց եւ
պղծոց եւ պոռնկաց եւ կախարդաց եւ
կռապաշտից եւ ամենայն դերատուաց եւ
ստոց՝ բաժին նոցա ի լիճ բորբոքեալ հրով եւ
ծծմբով, որ է մահ երկրորդ։

9 Եւ եկն մի ոմն յեւթն հրեշտակացն՝
որք ունէին զեւթն բաժակսն զլցեալսն եւթն
յետին հարուածովն, եւ խաւսեցաւ ընդ իս՝

---

5 Ձեռ. ասաց ինձ ԵԲ սխալ դասաւորութեամբ բա-
ռերը գրեն՝ ասացին | նստէրն ի վերա | ԵԲ ունենա-
լով՝ այս բան | 6 սկիզբն | տաց ես |
ԵԲ կենդանութե̄ | 7 ժառանկեսցէ | եղիցի (Ձեռ.՝
եղէց) նý ա̄ծ (Ե նոյնպէս ա̄ծ). — Հմմտ. ըծանօք.
յայս տեղի | Ձեռ. իմ նախ գրեալ՝ ինձ, ապա՝ ջնջե-
լով նոյնն գրչաւ՝ մ եղբեալ է ի վերայ ն տառին |
8 թէրէհաւատից | պոռընկացն | ա̄մ | բաժինք
նý | ծծըմբով | 9 է̄ հրշկացն | որ (Ձեռ.՝ որք) |
Ե ունեին, Բ—էին | զէ̄ | է̄ յետին հարուածովն |

ասելով. Եկ՝ եւ ցուցից քեզ զկինն՝ զհարսն
զգառինն։ 10 Եւ տարաւ զիս հոգւով ի վերայ
լերին մեծի եւ բարձու, եւ եցոյց ինձ
զքաղաքն զվերին Երուսաղէմ սուրբ՝ զի իջա-
նէր յերկնից յԱստուծոյ, 11 ունելով լեառն
խաղաղութեան զփառս. որոյ լոյսն նման էր
յասպիս ական լուսաւորի. 12 որ ունէր պա-
րիսպ մեծ եւ բարձր, ունելով դրունս եր-
կոտասան, եւ անուանք գրեալ էին, որ են
անուանք ցեղից որդւոցն Իսրայելի։ 13 Յա-
րեւելից կողմանէ դրունք երեք, եւ ի հիւ-
սիսոյ կողմանէ դրունք երեք, եւ ի հարաւ-
ոյ կողմանէ դրունք երեք, եւ յարեւմտից
կողմանէ դրունք երեք։ 14 Եւ լայնութիւն քա-
ղաքին ունէր երկոտասան թիւ, եւ երկոտա-

եւ [illegible] դոկաւէ | 10 Է ի վէրայ. Բ ի վերա | վերինն | ԷԲ Եմ (Բ Էմ) ՜ր | Է յ՜յ. Բ ՜յ | 11 ունելով դոկաւէ | ԷԲ խաղաղութե. — [illegible] [illegible] | մի այն ([illegible] նման) | 12 երկոյտասան | անուանք ([illegible]) | Է եին. Բ էին | որդոցն | Է իղի. Բ իղի | 13 [illegible] երեք [illegible] Գ | ի հիւսուսոյ | [illegible]՝ եւ յարեւմտից կողմանէ դրունք Գ, եւ հարաւոյ կողմանէն դրունք Գ | 14 ԷԲ լայնութի | [illegible] երկոտասան [illegible] ՃԺան, [illegible] երկոյտասան |

սան առաքելոցն գառինն։ 15 Որ խաւսէր ընդ
իս՝ ունէր չափ ձող ոսկի, զի չափեսցէ զքա-
ղաքն եւ զդրունս նորա եւ զպարիսպս նորա։
16 Եւ քաղաքն չորեքանկիւնի կայ. եւ երկայ-
նութիւն նորա՝ որչափ եւ լայնութիւն նորա։
Եւ չափեաց զքաղաքն երկոտասան ասպարէզ.
զերկայնութիւն նորա, եւ զլայնութիւն եւ
զբարձրութիւն նորա։ 17 Որ ¦ եւ չափեաց զպա-
րիսպ նորա՝ հարիւր քառասուն եւ չորք կան-
գուն, զչափ մարդոյ՝ որ է հրեշտակի։ 18 Եւ
յարկք պարսպին՝ յասպիս ականց, եւ բոլոր
քաղաքին յոսկւոյ սրբոյ՝ ի նմանութիւն սուրբ
ապակւոյ։ 19 Եւ շինուած պարսպի քաղաքին՝
ամենայնն յականց պատուականաց. երկրորդն՝

յԵ էին. առաքելոցն՝ նախ գրեալ ունէր՝ առաք է վերջ տողին, եւ է ներքին յանցորդ տողին՝ Ն. ապա նէց առաքէր ի լուսանցս նոյն գրով յաւելեալ է՝ ելոց. էսկ Բ ունի ի կարգին՝ առաքելոցն. — Ընթերցի է ասկայն ԲԵ՝ համաձայն այս թուլանդակ յերկ. եւս օրին. ԵԲ խանգարեալ է. հմմտ. զծանօթ. յայս համար | 15 Նր (երկու.) | 16 Ե կա, Բ-յ | ԵԲ չընդհուին ջարած՝ յանգեալը է –թիւն՝ ունին համառօտաբէր վերջին՝ –թի | Նր (լըրեւէնդ) | ԺԲան ասպարեզ | եւ զբարձրութի Նր եւ զլայնութի Նր | 17 զպարիսպն Նր Ճ. եւ Խ. եւ Դ. | հշկի | 18 պարըսպին | յոսկոյ | ԵԲ ի նմանութի որ | ԵԲ ապակոյ | 19 շինեած պարըսպի | ամն (=ամենայնն) | պատուականաց | յառաջ ...ան

շափիւղա, երրորդն՝ կարկեհան, չորրորդն՝
զմրուխտ, [20] հինգերորդն՝ եղունգն, վեցերորդն՝
սարդիոն, եւթներորդն՝ ոսկիակն, ութերորդն՝
բիւրեղ, իններորդն՝ տպազիոն, տասներորդն՝
գոճազմ, մետասաներորդն՝ յակինթ, երկո-
տասաներորդն՝ յակաթ, երեքտասաներորդն՝
մարգարիտ. [21] դուռն՝ որք էին ի միջէ մար-
գարտէ։ Եւ հրապարակ քաղաքին՝ ոսկի սուրբ,
իբրեւ զապակի փայլուն։ Եւ մաւտ առ-
դրամբն ճառագայթագոյն իբրեւ զբիւրեղ։
[22] Եւ տաճար ոչ տեսի ի նմա, զի Տէր Աս-
տուած ամենակալ է տաճար նորա՝ եւ
գառնն։ [23] Եւ քաղաքին ոչ պիտոյ էր արե-
գակն եւ ոչ լուսին, զի ծագեսցեն. զի ինքն
փառքն Աստուծոյ լուսաւորեսցեն զնա, եւ
ճրագ նորա՝ գառնն։ [24] Եւ թագաւորք երկրի

զՔառէր երկրորդն՝ ըստ Խմաստին՝ Նեղէ ինչ կայ, ըրր-
մե ու. է ծանօթ. յայս տեղէ | շափիղա | կարկէհան |
զմրուխթ | 20 հինկեր" եղունք | վեցերրորդն |
եաւթներորդն | ութերորդ բիւրեղն | Թերր". տպա-
զիոնն, Ժեր" | ԺԱ·երր". | ԺԲերր" յակատ | Էրէք-
տասաներորդ | 21 քաղակին | որ | որպս (Չէնկ.՝
իբրեւ) | ճառագայդագոյն. — որպէս Վերջին մասն Նախ-
ընթաց համարին, այնպէս եւ սորին բնագիրն յերկ. եւս
օրինակաց ԵԲ բոլորովին աղաւաղեալ է. — ու այս տ.
է սորին ընթանօթ. | 22 ի նա (Չէնկ.՝ ի նմա) | ԵԲ տր
ած | Ե ամէ(Բ ե)նակալ | նր | 23 ԵԲ այ | նր զառն |

բերեն զփառս իւրեանց ի նա. [25] Եւ դրունք
նորա ոչ փակեսցին ի տուէ, քանզի գիշեր
չիք անդ. [26] Եւ բերցեն զփառս եւ զպատիւ
ազանց ի նա։ [27] Եւ ոչ մտցէ ի նա ամենայն
ապականեալ եւ որ առնէ զպղծութիւն եւ
ստութիւն, բայց միայն գրեալքն ի գիրս կեն-
դանութեան գառինն։

ԳԼ. ԻԲ.

[1] Եւ եցոյց ինձ գետ ջուր կենդանի՝ լու-
սաւոր իբրեւ զբիւրեղ, զի ելանէր յաթոռոյն
Աստուծոյ եւ գառինն. [2] ընդ մէջ հրապարա-
կի նորա եւ գետոյն՝ աստի եւ անտի՝ փայտ
կենդանի՝ առնէր պտուղ երկոտասան, ըստ
ամսոյ ամսոյ տալով զպտուղ իւր, եւ տերեւ
փայտին յառողջութիւն ազանց։ [3] Եւ ամե-
նեւին նզովք ոչ եւս լիցին։ Եւ աթոռն Աս-

24 իւրանց | 25 նր | ի տուէ | [illegible] | 27 Ե ամենայն. Բ ամ | ԵԲ զպղծութի եւ (Բ առնէ եւ) (Բ զ)ստութի | կենդանութե |

Գլ. ԻԲ.—1 կենտանի | Ե զբեւրեղ. Բ զբիւրեղ | ԵԲ այ | 2 նր | կենտանի | բժան | ԵԲ յառող-ջութի | 3 ամէնեւին | [illegible] | ԵԲ այ |

աթոռոյ եւ գառինն ի նմա են. եւ ծառայք
նորա պաշտեն զնա. [4] եւ տեսցեն զերեսս
նորա, եւ զանուն նորա ի վերայ ճակատուց
իւրեանց: [5] Եւ գիշեր ոչ եւս լիցէ, եւ ոչ
է նոցա պիտոյ լոյս ճրագի եւ ոչ լոյս արե-
գական, զի Տէր Աստուած լուսաւորեսցէ զնո-
սա. եւ թագաւորեսցեն յաւիտեանս յաւի-
տենից: [6] Եւ ասաց ինձ. այս բանք հաւատա-
րիմ եւ ճշմարիտ են. եւ Տէր Աստուած հո-
գւոց մարգարէից առաքեաց զհրեշտակ իւր
ցուցանել ծառայից իւրոց որ լինելոցն է վաղ-
վաղակի: [7] Ահաւասիկ գամ փութանակի: Երա-
նի որ պահէ զբանս մարգարէութեան գրոցս
այսոցիկ:

[8] Եւ ես Յովհաննէս լսէի եւ տեսանէի
զայս. եւ յորժամ լուայ եւ տեսի, անկայ
եւ երկիր պագի առաջի ոտից հրեշտակին՝ որ
ցուցանէր ինձ զայս: [9] Եւ ասէ ցիս. տես,
գուցէ. ծառայակից քո եմ եւ եղբարց քոց
մարգարէից, եւ որք պահեսցին զբանս գրոցս

ի նմայ | նր̃ | 4 նր̃, այսպէս եւ [illegible] | ԵԲ ի վերա | իւրանց | 5 պիտոյ (է պակասէ) նց̃ | ԵԲ տր̃ ած̃ | զնս̃ | Թգ̃րեսցեն | 6 ԵԲ տր̃ ած̃ | զհշկ̃ | 7 ԵԲ մարգարէութե̃ | այսորիկ | 8 Ե տեսանէի, Բ -նէի | Ե լուա. Բ լւա | Ե անկա, Բ -յ | հշկ̃ին | ԵԲ ցուցանէ, [illegible]՝ ցուցանէր | 9 [illegible] եմ [illegible]՝ ես |

այսոցիկ. Աստուծոյ պագ երկիր։ 10 Եւ ասէ
ցիս. մի կնքեսցես զբանս մարգարէութեան
գրոցս այսոցիկ. քանզի ժամանակն մօտ է։
11 Որ վնասելոցն է՝ վնասեսցէ եւս, եւ աղ-
տեղին՝ աղտեղասցի, եւ արդարն՝ արդարու-
թիւն արասցէ, եւ սուրբն յաւելցէ։
12 Եւ զի ահաւասիկ գամ փութանակի եւ
վարձք իմ ընդ իս՝ հատուցանել իւրաքանչիւր
ըստ գործոց իւրոց։ 13 Ես ալփն եւ ովն, Նախն
եւ կնիք, սկիզբն եւ կատարած։ 14 Երանի որ
պահեն զպատուիրանս Նորա, զի եղիցի իշխա-
նութիւնն Նոցա ի վերայ փայտին կենաց, եւ

ԵԲ *ա̃յ* | 10 ԵԲ *մարգարէութե̃* | 11 ԵԲ [illegible] *վնասեսցի* | ԵԲ *արդարութի̃* | *սրբն* | 12 [illegible] *եւ զի* [illegible] *ընդ իս* [illegible] *ահաւասիկ գամ փութա-նակի եւ վարձք իմ.* [illegible] — [illegible] | 13 [illegible] *նախն եւ կնիք* ԵԲ [illegible] *նախ եկնիք*, [illegible] — [illegible] *նախ եւ զկնիքն*. — [illegible] | *սկիսբն* | 14 *զպատուիրանս նր̃* | Ե *իշխա-*

ընդ դրունս մտցեն ի քաղաքն։ 15 Եւ ելցեն
արտաքս շունք եւ կախարդք եւ պոռնիկք
եւ սպանողք եւ կռապաշտք եւ ամենայն
որք առնեն ստութիւն։ 16 Եւ ես առաքեցի
զհրեշտակ իմ վկայել ձեզ զայս յեկեղեցիս։
Ես եմ արմատ եւ ծնունդ Դաւթի, աստղն
լուսաւոր առաւօտին։ 17 Եւ Հոգին եւ հարսնն
ասեն։ Եւ որ լսէն ասասցէ. Եկ։ Եւ որ ծա-
րաւին է՝ եկեսցէ, որ կամին՝ առցէ զջուրն
կենդանութեան։

18 Վկայեմ ես ամենայնի՝ որ լսիցէ զբանս
գրոցս այսոցիկ։ Եթէ ոք յաւելցէ ի վերայ
սոցա՝ յաւելցէ Աստուած ի վերայ նոցա
զհարուածս զգրեալս ի գիրս յայսմիկ. 19 Եւ
եթէ ոք պակասեցուսցէ ի բանից մարգարէու-

նութ̃ին, Բ–թ̃ի | նր̃ (փխկ.՝ նոցա) | դրունքս | 15 եւ [illegible] | ի տեղի բառիս ստութիւն Ե գրէ ստա թ̃ի, միջին տառքն քերեալ եղծեալ. իսկ Բ ունի՝ ստայ ւթ̃ի, որ մարթ է ընթեռնուլ կամ՝ ստութիւն, եւ կամ թերեւս՝ ստայօդութիւն | 16 առաքեցից զհշկ̃ | 17 [illegible] Ե Բ. [illegible] | Ե լսեն. Բ լսէ | կենդանութե̃ | 18 յա̃մի եւ որ լսիցէ | գրոցս այսմիկ | էթէ | ի վերա սորա (փխկ. սոցա) | Ե Բ ա̃ծ | ի վերա (այսպէս եւ Ե) նց̃ ([illegible]) զհարուածս | 19 թէ (փխկ.՝ եթէ) | գրոցս մարգարէութե̃ (–թե̃ նաեւ Ե) |

Թեան գրոցս այսորիկ՝ պակասեցուսցէ Ա-
ստուած զբաժին նորա ի փայտէն կենաց եւ
ի քաղաքէն սրբոյ՝ գրելոյ ի գիրս յայսմիկ։
20 Ասէ որ վկայէ զայս գոլ. այո՛, ահաւա-
սիկ գամ վաղվաղակի։ Ե՛կ, Տէր Յիսուս Քրիս-
տոս։

21 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստո-
սի ընդ ամենայն սուրբս. ամէն։

այսորիկ պակասէ | ԵԲ ած | զբաժինն նր | Ե ի քա-
ղաք . . . , յետին հանէր եղծեալ. Բ ի քաղաքաց |
20 այոյ | ԵԲ որ յս քս | 21 շնորք | ԵԲ տն.
նմանապէս՝ յի քի | Էիկ. ամենայն անէ՝ ամէնեսեան |
պակասեն յետին քառոց՝ սուրբս. ամէն։



Գ.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

թեան գրոցս այսորիկ՝ պակասեցուսցէ Աս-
տուած զբաժին նորա ի փայտէն կենաց եւ
ի քաղաքէն սրբոյ՝ գրելոյ ի գիրս յայսմիկ։
20 Ասէ որ վկայէ զայս գոլ. այո՛, ահաւա-
սիկ գամ վաղվաղակի։ Ե՛կ, Տէր Յիսուս Քրիս-
տոս։
21 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստո-
սի ընդ ամենայն սուրբս. ամէն։

այսորիկ պակասէ | ԵԲ ա̃ծ | զբաժինն ն̃ր | Ե ի քա-
ղաք . . . , յետին ձեռնէր եղծեալ. Բ ի քաղաքաց |
20 այոյ | ԵԲ ո̃ր յ̃ս ք̃ս | 21 շնորք | ԵԲ տ̃ն.
նմանապէս՝ յ̃ի ք̃ի | ԷԺԿ. ամենայն ընդ՝ ամէնեսեան |
պակասեն յետին ձեռագր՝ սուրբս. ամէն։



Գ.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽԱԿԱՐԳ ԳԻՏԵԼԻՔ

Ա.

Թ *նշանակէ* զհին Հայերէն թարգմանութիւն Յայտնութեանն Յովհաննու, *ի լոյս ընծայեալս այսու առաջին տպագրութեամբ.*

Ե » *զօրինակ թէ որ յԵրուսաղէմեան ձեռագրին.*

Բ » *զօրինակ թէ որ ի Բերլիննեան ձեռագրին (տ. վերագոյն էջ 3).*

Լ » զՆերսիսի Լամբրոնացւոյն *արարեալ* թարգմանութիւն Յայտնութեանն Յովհաննու, *ըստ տպագր.* Զոհրապեանի («Աստուածաշունչ Մատեան *Հին եւ Նոր Կտակարանաց, ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց՝ ի Հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի Հայկականս բարբառ. Նորոգապէս ի լոյս ընծայեալ յընտրելագոյն գրչագիր դաղափարէ, համեմատութեամբ այլ եւ այլ օրինակաց, հանդերձ կարեւոր ծանօթութեամբք բնաբանին։ Յաշխատասիրութենէ Տն. Հ. Յովհաննու* Զոհրապեան *վրդպետի.* —

տպագրեալ — ի Վենետիկ, 1805 — *ի գործարանի Սրբյն Ղազարու*»).

Մ *Նշանակէ զբնաբանն Յայտնութեան որ ի* «Մեկնութեան Յայտնութեան *Ս. Աւետարանչին Յովհաննու, արարեալ Տ.* Անդրէի *եւ* Արետասայ *եպիսկոպոսացն Կեսարու, թարգմանեալ ի Յոյն բնագրէ եւ սրբագրեալ Տ.* Ներսէսի *Արքեպիսկոպոսի Տարսօնի Կիլիկեցւոյ. տպ. յԵրուսաղէմ, ի տպարանի Ս. Յակովբեանց*, 1855».

Յ " զՅունական *ստուգաբանեալ* բնագիրն Յայտնութեան *ըստ* Տիշընդորֆեան — Գեբհարտեան *քննական հրատարակութեան Յունարէն Նոր Կտակարանի, տպագր. ի Լիպսիա, յամի* 1896 („*Novum Testamentum Graece* recensionis Tischendorfianae ultimae textum cum Tregellesiano et Westcottio-Hortiano contulit et brevi adnotatione critica additisque locis parallelis illustravit Oscar de *Gebhardt*. Editio stereotypa septima. Ex officina Bernhardi Tauchnitz. Lipsiae 1896.").

Այլ եւ առ ի համեմատութիւն առաջիկայ նորատիպ Թարգմանութեանս Յայտնութեան ընդ այլ եւ այլ օրինակս Յունական Բնագրին՝ ուրեք ուրեք ի կիր առեալ է, ի մէջ այլոց, քննական հրատարակութիւնն Նոր Կտակարանի, յարդարեալն ի Տիշընդորֆէ, *Հտ. Բ., տպ. ի Լիպսիա* 1872, *հան-*

ՈՒՂՂԵԼԻՔ

ԷՋ	ՏՈՂ		ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
4	7	ի Ներքուստ	ձայն	ձայն
5	8	»	գրեալ	գրեալ
9	4	»	[illegible].	[illegible].
11	2	»	վերայ	վերայ
11	1	»	տաղաչափութեան	տաղաչափութեան
17	5	»	է	:է: (Բ է)
19	1	»	էր ձայնաւ	էր Երկրորդ ձայնաւ
21	7	»	[illegible].	[illegible].
22	2	ի վերուստ	միասնել	միասնել
23	5	ի Ներքուստ	առաջնոյ	առաջնոյ
27	7	»	որպէս	որպէս.
28	4	»	[illegible]	[illegible]
29	3	»	տաղաչափեալ	տաղաչափեալ
32	7	»	[illegible]	[illegible]
35	1	ի վերուստ	իւրեանց եւ	իւրեանց, եւ
36	9	»	Աստուծոյ	Աստուծոյ
36	10	ի Ներքուստ	յերկինս՝ կին	յերկինս. կին
41	1	»	զառաջնոյ	զառաջնոյ, [illegible] [illegible]՝ զառաջնո, որպէս գրէ Ե
42	12	ի վերուստ	զանսուն	զանուն
45	12	ի Ներքուստ	առանց	առանց
47	6	»	ընթուոց	ընթւոց
51	8	ի վերուստ	ահաւասիկ	ահաւասիկ
75	11	ի Ներքուստ	ձայնաւն	ձայնաւն
73	6	»	բառքդ (է ձայնաւ) ջնջելի են	

